ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 25
Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 25

ՈՐՈՇՈՒՄ N 02/2026-Դ/Վ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 23 հունվարի 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի հունվարի 20-ին Սեմյոն Բաբայանի կողմից Հանձնաժողով ներկայացված դիմումը (այսուհետ՝ նաև Դիմում) և դրա հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքները.

ՊԱՐԶԵՑ

2026 թվականի հունվարի 20-ին Հանձնաժողով է մուտքագրվել ՀՀ քաղաքացի Սեմյոն Բաբայանի՝ էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով ուղարկված «ՀԱՐՑՈՒՄ» վերտառությամբ դիմումը (այսուհետ՝ Դիմում), որով վերջինս հայտնել է հետևյալը՝

«2025թ. դեկտեմբերին յուրաքանչյուր պատգամավոր ստացել է մոտ 2,9–3 մլն դրամ վճարում: Փաշինյանը և փոխվարչապետերը 2025թ. ստացել են ընդհանուր 51,6 մլն դրամի պարգևավճար: 2. ՀՀ կառավարության և Ազգային ժողովի պատգամավորների կողմից 2025թ. դեկտեմբերին և 2026թ. հունվարին իրականացված խոշորաչափ դրամական վճարումները (պարգևավճարները), որոնք բազմապատիկ գերազանցում են օրենքով սահմանված դրույքաչափերը, **պարունակում են կոռուպցիոն հանցակազմի տարրեր:** Դիմումատուն կոռուպցիոն հանցակազմի առկայությունը հիմնավորել է հետևյալով՝

1. Շահերի բախում: Գործադիր և օրենսդիր մարմնի անդամները, **օգտագործելով իրենց պաշտոնական դիրքը,** որոշում են կայացրել սեփական անձանց բյուջետային միջոցներից հավելյալ ֆինանսական միջոցներ հատկացնելու վերաբերյալ, ինչը հակասում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին:

2. Քաղաքական կոռուպցիա և կաշառք: Հաշվի առնելով 2026 թվականի սպասվող ընտրությունները, պետական բյուջեից նմանատիպ վճարումները դիտարկվում են որպես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նկատմամբ լոյալություն ապահովելու գործիք (քաղաքական կաշառք ապարատին):

3. Անհամաչափություն: Վճարվող գումարները (3,000,000 դրամ և ավելի) չեն համապատասխանում ՀՀ-ում սահմանված սոցիալական չափանիշներին և օրենսդրական տրամաբանությանը:

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի դրույթները՝ դիմումատուն ներկայացրել է հետևյալ պահանջները՝

- Հարուցել վարույթ՝ պարզելու նշված վճարումների օրինականությունը և դրանց համապատասխանությունը բարեվարքության կանոններին:

- Գնահատել վճարումների ազդեցությունը պատգամավորների քվեարկության անկախության վրա:

- Պարզել արդյո՞ք առկա են կազմակերպված կոռուպցիոն վատնումները:

Միաժամանակ, դիմումատուն իր գնահատմամբ նշված գործընթացում հանցագործության հատկանիշների առկայության հիմքում նշել է **պաշտոնեական լիազորությունների չարաշահումը, վարչական ռեսուրսի չարաշահումը և բյուջետային միջոցների վատնումը:**»:

2. Սույն որոշման համար էական նշանակություն ունեցող փաստական և իրավական հիմքերն ու հիմնավորումները.

Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու **միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով**:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ: (…)

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **վարույթ կարող է հարուցվել՝ յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա,** իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի դիմումի հիման վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը **պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց** կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև **պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց** կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ: (…)

Օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները: 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված դիմումը պետք է պարունակի՝

1) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ դրա լրիվ անվանումը, հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը).

2) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված (...) շահերի բախման վիճակում առերևույթ հայտնված պետական պաշտոն զբաղեցնող անձի (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի) կամ համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալի կամ Երևան համայնքի վարչական շրջանի ղեկավարի կամ նրա տեղակալի՝ պաշտոն զբաղեցնող անձի անունը, ազգանունը, որին վերաբերում է դիմումը, նրա զբաղեցրած պաշտոնը, և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որտեղ անձը պաշտոն է զբաղեցնում (…)

3) խախտումը կամ շահերի բախման դեպքը.

4) փաստական հանգամանքները, որոնցով ողջամտորեն հիմնավորվում է առերևույթ խախտումը կամ դեպքը, առկայության դեպքում՝ այդ հանգամանքների հիմնավորվածությունը հավաստող ապացույցները (փաստաթղթեր, նյութեր).

5) դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկան).

(...)

Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝**

(…)

2) դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից.

(…)

Համակարգային վերլուծության ենթարկելով վերոգրյալ իրավական կարգավորումները պարզ է դառնում, որ Հանձնաժողովն իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնք մտնում են վերջինիս լիազորությունների մեջ: Հանձնաժողովի լիազորությունները սահմանված են Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, որով սահմանվել է **այն պաշտոնատար անձանց սպառիչ ցանկը,** որոնց վերաբերյալ դիմումները

քննելու և վարույթ հարուցելու իրավասություն ունի Հանձնաժողովը: Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից կարող են քննվել և լուծվել **պետական պաշտոն զբաղեցնող անձանց շահերի բախման դեպքերի** վերաբերյալ դիմումներ: Սակայն որոշակի պետական պաշտոն զբաղեցնող անձանց մասով Օրենքով սահմանված է բացառություն՝ հստակ ամրագրելով, որ վերջիններիս վերաբերյալ դիմումները ենթակա չեն քննության կամ լուծման Հանձնաժողովի կողմից, այն է՝ Հանձնաժողովի կողմից չեն կարող քննվել պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի պաշտոն զբաղեցնող անձանց վերաբերյալ դիմումները:

Սույն դիմումի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Դիմումի պահանջը բավարար որոշակի չէ՝ պաշտոնատար անձին վերաբերելիության առումով, այն չի պարունակում կոնկրետ պաշտոնատար անձի վերաբերյալ տվյալներ, քանի որ Դիմումատուն վկայակոչել է 2026 թվականի սկզբին Կառավարության անդամների և Ազգային ժողովի պատգամավորների կողմից ստացված պարգևավճարների մասին՝ նշելով, որ սույն հանգամանքը հանրային մտահոգություններ է առաջացրել և իր գնահատմամբ պարունակում է առերևույթ **հանցագործության հատկանիշներ,** մասնավորապես՝ **պաշտոնեական դիրքի չարաշահում, վարչական ռեսուրսի չարաշահում և բյուջետային միջոցների վատնում:** Մինչդեռ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի իրավակարգավորումների համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է **կոնկրետ պետական պաշտոն զբաղեցնող անձանց** շահերի բախման վերաբերյալ դեպքերը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ քննարկվող Դիմումը ներկայացվել է ընդհանրական ձևով՝ այն չի պարունակում որևէ պաշտոնատար անձի անվան, ազգանվան, զբաղեցրած հստակ պաշտոնի վերաբերյալ տվյալները, այսինքն՝ Դիմումում չի նշվել **կոնկրետ պաշտոնատար անձի վերաբերյալ** Օրենքով հստակ պահանջվող տվյալները, որոնց վերաբերյալ ներկայացված դիմումները Հանձնաժողովն իրավասու է քննության առնելու:

Հանձնաժողովն անդրադառնալով Կառավարության՝ դիմումի առարկային վերաբերելի որոշումներին՝ արձանագրում է, որ պետական կառավարման համակարգի առանձին մարմինների կատարողականի գնահատման և դրա հիման վրա խրախուսման պիլոտային կարգը (այսուհետ՝ Պիլոտային կարգ) և պետական կառավարման համակարգի առանձին

մարմինների (այսուհետ՝ կառավարման մարմիններ) ցանկը սահմանվել են Կառավարության՝ 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 1712-Լ որոշմամբ:

Պիլոտային կարգով կարգավորվում են պետական կառավարման համակարգի առանձին մարմինների կատարողականի գնահատման և դրա հիման վրա մարմիններին խրախուսման ֆոնդի տրամադրման հետ կապված հարաբերությունները: Սույն կարգում նկարագրված գործընթացի նպատակը Կառավարության ծրագրով և ռազմավարություններով սահմանված խնդիրների արդյունավետ լուծումն է՝ հաշվետու ժամանակահատվածի համար սահմանված առաջնահերթությունների ուղղությամբ անհրաժեշտ գործողությունների և (կամ) միջոցառումների կատարողականի գնահատման միջոցով:

Ըստ Կարգի 9-րդ կետի՝ կառավարման մարմինների, վերջիններիս կանոնադրությամբ նախատեսված կամ համակարգման ներքո գտնվող մյուս մարմինների և միավորների կատարողականի ընդհանուր գնահատականը ձևավորվում է տվյալ մարմնի համար սահմանված առաջնահերթությունների համար հաշվարկված գնահատականների թվաբանական միջինից, ընդ որում, յուրաքանչյուր առաջնահերթության գնահատականը ևս ձևավորվում է դրա առանձին գործողությունների կատարման գնահատականի թվաբանական միջինից (...):

Կառավարման մարմինների գնահատման ցուցանիշը որոշվում է՝ ելնելով կատարողականի գնահատման արդյունքում ստացված միավորի և հնարավոր առավելագույնի հարաբերությամբ՝ արտահայտված տոկոսով:

Վարչապետի աշխատակազմի, փոխվարչապետերի գրասենյակների գնահատականը որոշվում է կառավարման մարմինների կատարողականի ընդհանուր գնահատականների թվաբանական միջինով:

Կարգի 14 և 15-րդ կետերով սահմանվում են կառավարման մարմնի խրախուսման ֆոնդի մեծությունը որոշելու եղանակը և ֆոնդի հաշվարկման բանաձևը:

Միաժամանակ, Կառավարության՝ 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 1712-Լ որոշման 2-րդ հավելվածով սահմանվել է մարմինների ցանկը, որոնց կատարողականի գնահատումն իրականացվում է վերը նշված պիլոտային կարգով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիմումի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ Դիմումում բարձրացված հարցերը՝ **վարույթ հարուցելու՝ պարզելու վճարումների օրինականությունը, գնահատելու վճարումների ազդեցությունը պատգամավորների քվեարկությունների անկախության վրա, ինչպես նաև բացահայտելու «կոռուպցիոն վատնումները»՝ դուրս են Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից,** ուստիև Հանձնաժողովը գտնում է, որ Դիմումի հիման վրա վարույթի հարուցումը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածով և 30-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քաղաքացի Սեմյոն Բաբայանի կողմից 2026 թվականի հունվարի 20-ին ներկայացված «ՀԱՐՑՈՒՄ» վերտառությամբ դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել ՀՀ քաղաքացի Սեմյոն Բաբայանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ